

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ


Նուէրներու, Պատարագի եւ ողորմութիւն ընելու մասին

Աղքատներուն ընդունելութիւն ընելը շատ օգտակար է ու անոնց աղօթքները Աստուծոյ մօտ են. «Երանելի է ան, որ կը խորհի աղքատին եւ չքաւորին մասին, Տէրը կը փրկէ զայն, երանելի կ'ընէ երկրի վրայ եւ թշնամիներուն ձեռքը չի մատներ զայն»: (Սաղմոս 41:1-3): Կարիքատուները կերակրելու երջանկութիւնը այս է, ինչ որ Քրիստոս իրեն համար կատարուած կը նկատէ: Իսկ ի՞նչ պիտի շահիս, երբ ունեւորները խնձոյքի հրաւիրես եւ կամ ի՞նչ պիտի ըլլայ անոր օգուտը: Անօթիներուն համար եղած ընդունելութիւնը օգտակար է, իսկ կուշտերուն համար եղածը՝ ոչ: Քրիստոս չըսաւ. «Յագեցածները կշտացուցիք» ու նաեւ չըսաւ. «Խմելիք տուիք անոնց, որոնք գինով էին», այլ ըսաւ. «Տեսաք անոնք, որ ծարաւ էին եւ դուք անոնց ջուր տուիք խմելու: Տեսաք մերկերը ու զանոնք հագուցուցիք եւ օտարներուն այցելեցիք»: Նման գործերն են, որ արժանի պիտի ըլլան վարձատրութեան եւ երանութեան եւ ոչ թէ կուշտերուն եւ ունեւորներուն համար եղած կերուխումները, որովհետեւ ան, որ աղքատը, կարօտեալը, օտարը, հիւանդը եւ անտունը կը կերակրէ, ոչ թէ մարդ մը, այլ՝ Քրիստոսն է, որ կ'ընդունի, Քրիստոսն է, որ կը սփոփէ, Քրիստոսն է, որ կը մխիթարէ, Քրիստոսն է, որ կը հանգչեցնէ եւ Քրիստոսն է, որ կը ծառայէ, քանզի անսուտ է Տէրունի խօսքը:

(Ճառեր Յովհան Մանդակունի)

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



**ՊԼՏՐԱՎԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄԸ
2.- Պատրաստութիւն ընծաներուն
Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ
ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ**

Աստուածային սիրոյ ճառագայթումին ներքեւ՝ հաւատացեալներուն պայծառացեալ սիրտերը կ'ըմբռնեն Աստուածորդայն լոյս ներկայութիւնը: Քրիստոսն է՝ որ կը յայտնուի. Ս. Սեղանէն քրիստոնէական հաւատքի ամենէն գրաւիչ եւ առինքնող հրամայականն է, որ կ'աղբերանայ: Քրիստոսի ներկայութիւնը խորհրդանշող ամենէն վաերական վկայութիւնը՝ Սէրը, տակաւ կը տարածուի եկեղեցւոյ մէջ եւ կը համակէ հաւատացեալ ողջ ժողովուրդը:

Եւ ահա սարկաւազը Ս. Խորանէն կը յայտարարէ.- «Մուրբ համբոյրով ողջունեցէք իրար: Իսկ դուք, որ չէք կրնար հաղորդուիլ աստուածային Խորհուրդին, դուրս ելէք եւ հո՛ն աղօթեցէք»:

^a Սարկաւազը պատարագիչ քահանայէն ողջոյնը ստանալով վար կ'իջնէ եւ կը փոխանցէ ատեանին կեղորունը կանգնած առաջնորդին... Շարունակելի

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ

ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 23 ՅՈՒՆԻՍ 2024 ԹԻՒ 25

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 2.5-11: Հռ. 9.30-10.4: Մատթէոս 13.24-30

**ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏՔՆՈՍԻ 13.24-30**

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որոմն ալ երեւցաւ:

Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա որոմը»:

Ան պատասխանեց. «Ասիկա թշնամիի գործ է»:
Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս, որ երթանք եւ որոմը քաղենք»:

«Ո՛չ», պատասխանեց տէրը, « որովհետեւ որոմը քաղած ատեն կրնայ ըլլալ, որ երկուքն ալ միասին արմատախիլ ընէք: Չգեցէ՛ք, որ երկուքն ալ միասին աճին մինչեւ հունձքի ժամանակ, երբ հնձուորներուն կ'ըսես, որ նախ որոմը քաղեն, խորձեր կազմեն այրելու համար, եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեն շտեմարաններուս մէջ»:

Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի երկինքի արքայութիւնը»:

Լաւ սերմեր ցանող մարդը մեր Տէրը ինքն է Աստուած, իսկ լաւ սերմերը՝ մենք ենք: Որոմ ցանող թշնամին, անունէն ծանօթ է, սատանան՝ խաւարի իշխանը: Եթէ մենք առիթ տանք թշնամիին, այլ խօսքով, եթէ ականջ տանք լսելու թշնամիին, առիթ տանք անոր մտնելու մեր կեանքին մէջ, մեզի լաւ սերմ ըլլալէ կը դադրեցնէ եւ կը վերածէ որոմի: Որոմը անպէտք բոյս մըն է, մինչ ցորենը յարգի եւ օգտակար: Կ'ուզե՞նք լաւ սերմ մնալ, ինչպէս որ Աստուած ստեղծեց, ականջ տանք Քրիստոսի ձայնին եւ կեանքը ամբողջութեամբ ապրինք Քրիստոսի ներկայութեամբ:

ԳԻՏ ՏՓՈՅ Ա.ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ



Ա. Աստուածածինին նուիրուած տօներու շարքին, յետագային աւելցան նաեւ իր գործածած իրերու նուիրուած տօներ, որոնցմէ մէկն է Ա. Աստուածածնի Տուփի գիւտի տօնը:

Ա. Աստուածածնի տուփի գիւտը տեղի ունեցած է հետեւեալ ձեւով: Երկու իշխաններ ուխտի կը գտնուին Երուսաղեմ: Երբ անոնք կը հասնին Գալիլիա, այնտեղ կը տեսնեն հրեայ կնոջ մը տան առջեւ հաւաքուած բազմութիւն մը բաղկացած ամէն տեսակի հիւանդներէ: Հետաքրքրուելով ներս կը մտնեն եւ կը տեսնեն տուփ մը: Հրեայ կնոջմէ կ'իմանան, որ տուփը ժամանակին կը պատկանէր Ա. Կոյսին: Իշխանները կ'երթան Երուսաղեմ, շինել կու տան նոյն տուփէն օրինակ մը եւ վերադառնալով կնոջ բոլ, իրենց տուփը կը փոխանցեն անոր եւ Ա. Կոյսին իսկական տուփը կը տանին Պոլիս եւ պատահա՞ծը կը պատմեն Պատրիարքին: Պատրիարքը մեծ հանդիսութեամբ տուփը կը գետնէ եկեղեցւոյ մէջ եւ յատուկ օր կը նշանակէ տօնելու համար Գիւտ Տփոյ Ա. Աստուածածնի տօնը:

Այս տօնը մեր եկեղեցւոյ տօնացոյցին մէջ անցուցած է Սիմէոն կաթողիկոս 1774-ին եւ կը տօնակատարուի Յունիս, Յուլիս ամիսներու միջեւ:

ԻՆՉ Է ԱՅԳՈՒՅԸ

Մալխասեան բառարանը հետեւեալ բառերով մեկնաբանած է այգուցը. վաղ առաւօտեան, էգուց:

Ուրեմն մեր եկեղեցական ծիսարանին՝ Մաշտոցին մէջ Այգուց խորագիրին ներքեւ կը գտնենք արարողութիւն մը, որ կը բնորոշէ վաղ առաւօտեան կատարուող ծէս մը: Այս արարողութիւնը աղերսուած է թաղմանական կարգին:

Որեւէ թաղման կարգի յաջորդող առաւօտեան սգակիրները քահանայ հօր ընկերակցութեամբ գերեզման կ'երթան, խունկով եւ մոմով այգուցի արարողութիւնը կատարելու իրենց սիրեցեալ ննջեցեալի թարմ հողակոյտին վրայ:

Հանգստեան արարողութիւնը կը կատարուի, բայց յատկանշականը քահանայ հօր աղօթքին բովանդակութիւնն է:

Ներքին յուզականութենէ յորդոր աղերսանք մըն է ան, որ իբրեւ աղօթք կ'ընծայուի Հօր Աստուծոյ. «Հայր, ներէ՛ այս հանգուցեալին գործած կամաւոր եւ ակամայ մեղքերը, գորս անմարմին թշնամին պատճառեց իր խարէական պատրանքներով»:

Ապա աղօթասաց մատենագիրը իր աղերսանքը Աստուածորդւոյն ուղղելով կը հայցէ ըսելով. «Պատուէ՛ չարին հետ ամէն դաշինք, ջնջէ՛ իր մեղքերուն ձեռագիրը, Տէր, եւ լուս՛ հին աղտը... որպէսզի արեւափայլ դէմքով եւ անկողոպտելի զարդերով զարդարուած քեզ դիմաւորելու ելլէ, երբ գաս ու յայտնուիս Աստուածո՞յ՝ աստուածացեալներուն մէջ...»:

Անկասկած սգակիրները ամոքած իրենց վիշտը եւ սպիացուցած սիրտերն ու հոգիները, հոգեկան կազդուրումով կը վերադառնան տուն:

ԳՐԱՄԸ ՍԻՐՈՂԸ՝ ՉԻ ԿՐՆԱՐ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ ՍԻՐԵԼ

Տալ կարենալու համար, առաջին հերթին պէտք է գիտնալ, որ մեր ունեցածին տէրը Աստուած է եւ ոչ թէ մենք: Երկրորդ, պէտք չէ կապուած ըլլալ մեր ունեցածին: Երրորդ, պէտք չէ սիրենք դրամը: Չորրորդ, պէտք չէ մեր վստահութեան ու յոյսի աղբիւրը դրամը նկատենք: Պօղոս առաքեալ կը թելադրէ Տիմոթէոսի, որ այս աշխարհի հարուստներուն պատուիրէ, որ շատ չհպարտանան եւ անկայուն հարստութեան չվստահին, այլ՝ վստահին Աստուծոյ, որ ամէն ինչ առատօրէն կու տայ մեզի, որպէսզի վայելենք: (Ա.Տմ. 6.17):

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը :

Մէկը՝ որ կապուած է իր ունեցած հարստութեան, մէկը՝ որ կը սիրէ դրամը, մէկը՝ որ կը վստահի իր դրամին, չի կրնար օգնել ուրիշին: Դրամը պաշտողը՝ չի կրնար բաժնուիլ անկէ: Դրամը սիրողը՝ չի կրնար ողորմութիւնը սիրել: Դրամին վստահող մարդը՝ չի կրնար ուրիշ մարդոց վստահիլ: Դրամին ապաւինող մարդը՝ չի կրնար անօգնականին ապաւին ըլլալ: Դրամէն զատ ուրիշ բան չտեսնողը՝ չի կրնար տեսնել չքաւորը:

ԵԹԷ ԱՆՐԱՎՈՒՄԸ ԵՍ ԱՐԱՎՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ, ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 26

Արդարութիւն ըրէ ինծի, Տէ՛ր, անմեղ եմ ես: Մեզի՝ Տիրոջ վստահեցայ, եւ պիտի չսասանիմ: Փորձէ՛ զիս, Տէ՛ր, քննէ՛ զիս, քու կրակովդ փորձէ՛ ցանկութիւնները սրտիս եւ խորհուրդները մտքիս: Որովհետեւ ողորմութիւնդ չհանեցի ես միտքես, եւ ապրեցայ՝ միշտ քեզի հաւատարիմ մնալով: Անպէտք մարդոց ընկերութիւն չըրի՛ ես, կեղծատրին հետ բնա՛ գործ չունեցայ: Ատեցի միշտ չարերուն հաւաքոյթը, ամբարիշտին հետ բարեկամ ես չեղայ: Որպէս նշան անմեղութեան՝ պիտի լուսմ ձեռքերս, եւ սեղանիդ շուրջ դառնալով՝ սպասարկեմ քեզի, Տէ՛ր: Գոհութեան ե՛րգ պիտի երգեմ ես քեզի, եւ քու բոլոր սքանչելի գործերդ պիտի թուեմ: Տէ՛ր, կը սիրե՛մ վայելչութիւնը տանդ, այս յարկին՝ ուր քու փառքդ կը բնակի: Ամբարիշտներուն եւ ոճրագործին հետը միասին զիս ալ կորուստի մի՛ դատապարտեր: Անօրէնութեամբ լի եմ անոնց գործերը, եւ անոնց ձեռքերը՝ կաշառքով լեցուն: Բայց անմեղ եմ ես, ողորմէ՛ ինծի եւ փրկէ՛ զիս, Տէ՛ր: Անսայթա՛ք պահէ իմ քայլերս միշտ, եւ ես խմբուած ժողովուրդիդ հետ՝ քեզ պիտի օրհնաբանեմ: